գրականության և մշակույթի պատմության հարցերը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը իրենց պատշաճ տեղն ունեն ինստիտուտի գործունեության մեջ։ Դրանք արտահայտվում են այնպիսի թեմաների մեջ, ինչպես՝ ուրարտախուրիտական լեզվական ընդհանրությունները, որը կօգնի հետազոտելու մեր լեզվի մեջ դեռևս չմեկնաբանված բառապաշարը և բացահայտելու ուրարտա-հայկական և խուրիտա-հայկական պատմամշակութային որոշ կապեր։ Ավարտվել է խեթա-հայկական ընդհանրությունները թեման, շարունակվում են ուսումնասիրությունները խեթերեն լեզվի բառապաշարի և հնարևելյան լեզուների մի շարք խնդիրների վերաբերյալ։

Թրքագիտությունը կատարել է զգալի առաջընթաց, մշակելով կարևոր հարցեր ու պրոբլեմներ լեզվի, գրականության, ազգագրության և պատմության բնագավառներում։ Բոլոր վերոհիշյալ և զեկուցման մեջ չնշված, սակայն ոչ պակաս կարևոր ուսումնասիրությունները 20 տարում ամփոփվել են ավելի քան 80 մենագրություններում ու ժողովածուներում։ Դրանցից հինգը թարգմանվել և լույս են տեսել օտար լեզուներով, արտասահմանում։ Մեր հրատարակություններում կարևոր տեղ են գրավում մատենաշարով լույս տեսնող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (հրատարակվել են 10 գրքեր), «Հին Արևելք» (3 գիրք) և նոր հրատարակվող «Կովկասը և Բյուզանդիան» ժողովածուները։

Ունենալով անցյալ 20 տարիների փորձը, ինստիտուտի գիտական կոլեկտիվը ի վիճակի է առաջադրել և լուծել մի շարք կարևոր խնդիրներ և ստեղծել ու զարգացնել նոր ուղղություններ։ Անհրաժեշտ է ամենից առաջ ամրապնդել Թուրքիայի բաժինը, որպեսզի նա իր մյուս աշխատանքներին զուգահեռ կարողանա ղեկավարել «Հայաստանը և հայերը Օսմանյան կայսրության մեջ» խոշոր պրոբլեմի մշակումը։ Որպեսզի հետ չմնանք ժամանակակից արևելագիտության զարգացման մակարդակից, մեզ անհրաժեշտ է պատրաստել տնտեսագետների, սոցիոլոգների, կուլտուրայի պատմության մասնագետների, ինչպես նաև Հին Արևելքի և միջնադարի առանձին պրոբլեմների գծով նոր, երիտասարդ կադրեր։

Գիտխորհրդի ընդլայնված նիստում շնորհավորական ելույթներ ունեցան ու ապագա անելիքների մասին իրենց կարծիքները հայտնեցին ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Լ. Ս. Խաչիկյանը, պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, պրոֆ. Վ. Բ. Բարխուդարյանը, Գ. Տիրացյանը և Պ. Մուրադյանը։ Գիտական խորհրդի նիստն ամփոփեց ինստիտուտի դիրեկտոր Գ. Խ. Սարգսյանը։

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայտնի է, որ Աբովյանը Դորպատում սովորելու ժամանակ (1830—1835) ստացել էր լուրջ աշխարհագրական գիտելիքներ, Ֆ. Պարրոտի ղեկավարությամբ կառուցել հայագիր ուսումնական գլոբուս և ճանապարհորդել Մերձբալթիկայում, իսկ հետագա տարիների ընթացքում (1838—1847) մասնակցել դեպի Հայաստան կազմակերպված բոլոր գիտական արշավախմբերին։ Հատկանշական է, որ ուղևորություններից հետո նա գրել է արժեքավոր աշխատություններ, մի մասը հրատարակել և դրանց շնորհիվ դեռ իր կենդանության օրոք հայտնի եղել «իբրև հայրենիքը լավ ճանաչող և դեպի գիտությունները սեր ունեցող» ուսուցիչ[1]։ Բացի այդ, որպես աշխարհագրություն դասավանդող նա անհրաժեշտ ուշադրություն է դարձրել քարտեզների օգտագործման վրա, տարեցտարի հարստացրել Թիֆլիսի, այնուհետև Երևանի գավառական ուսումնարանների գրադարանները նոր հրապարակված պատի քարտեզներով ու ատլասներով[2]։ Հասկանալի է, որ աշխարհագրության այսպիսի ուսուցիչը, որի ամենօրյա կյանքում ու աշխատանքային գործունեության մեջ աշխարհագրական ինֆորմացիաներն այդքան խոշոր դեր են խաղացել, չէր կարող գծագրած չլինել սեփական քարտեզներ։ Բարեբախտաբար պահպանվել են Դորպատյան շրջանում նրա գծագրած երեք քարտեզները՝ Արևմտյան կիսագնդի, Արևելյան Հայաստանի և Հյուսիսային բարեխառն գոտու։

Արևմտյան կիսագնդի քարտեզը (Նկ. 1) գտնվում է Աբովյանի արխիվի չհրապարակված

---

1 *Տե՛ս Անդրկովկասյան ուսումնարանների վերատեսչության 1844 թ. մարտի 18-ի № 401 գրությունը ուղղված Խ. Աբովյանին, անվանի երկրաբան Հ. Աբիխի ուսումնասիրություններին մասնակցելու մասին (Հայկ. ՍՍՀ պետական, կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 780, թ. 1—2)։*

2 *Տե՛ս, օրինակ, Երևանի գավառական ուսումնարանի գրադարանի 1849 թ. գրքերի ցուցակը (նույն տեղում, գ. 1733, թ. 16—20)։*

տետրակներից մեկում։ Տետրակի թուղթը, որի վրա գծագրվել է քարտեզը, հաստ է, ամուր, գորշագույն։ Քարտեզը գծագրված է սև թանաքով։ Պահպանվել է լավ։ Ներքին տրամագիծը 126 մմ է, իսկ արտաքինը՝ 136 մմ։ Անկասկած այն կազմվել է ուսումնական նպատակներով։ գծագրված են մոտավոր ճշտությամբ, իսկ Հյուսիսային Ամերիկայի և Գրենլանդիայի բևեռային ափագծերը ուղղակի չեն անցկացվել՝ այն ժամանակներում դեռ բավարար հետազոտված չլինելու պատճառով։ Բոլորովին չի պատկերված Անտարկտիդան։ Մոտավոր են տեղադրվել



Նկ. 1

Հասարակածային առանցքի վրա, որը շարունակվում է դեպի աջ և դեպի ձախ, լավ են երևում հեղինակի կողմից կատարված հատուկ նշանները կարկինի սուր ծայրը դնելու համար։ Դեռ ավելին, գլխավոր այդ կետերը անվանել է տառերով, հավանաբար նույն աշխատանքները հայրենիք վերադառնալուց հետո աշակերտների հետ կրկնելու նպատակով։ Նման նշումներ կարելի է նկատել նաև բևեռային առանցքի շարունակությունների վրա։ Հյուսիսային և Հարավային Ամերիկաների ուրվագծերը նաև խաղաղ ու Ատլանտյան օվկիանոսների խոշոր կղզիները։ Ատլանտյան օվկիանոսում ցույց են տրվել Ազորյան կղզիները և Կանարյան կղզիներից Ֆերրոն, խաղաղ օվկիանոսում՝ Սանդվիչյան, Մարշալյան, Նոր Հիբրիդյան կղզիները, Նոր Կալեդոնիան և Նոր Զելանդիան։ Քարտեզի վրա միջօրեականները և զուգահեռականներն անց են կացվել ամեն մի 15 աստիճանի վրայով։ Սկզբնական միջօրեականն անց է կացվել ոչ թե Գրինվիչով, ինչպես ընդունված է այժմ, այլ Ֆերրո կղզու վրայով։

Քննարկվող քարտեզը պատկերազարդում է տետրակի «Գլոբուս և քարտեզ» վերնագիրը կրող պարագրաֆը։ Սրան է կցված Աբովյանի ձեռքով ստվարաթղթից պատրաստված սեգ-

3 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Խ. Աբովյանի արխիվ, № 136, թ. 2—3։

մենտի նմուշատիպը, որի կառուցման հարցին շատ տողեր են հատկացվել դորպատյան օրագրերում։ Բայց սեգմենտը սխալ էր գծագրվել. «...ես ցուցանեմ բարերարին զկազմեալ մասունս գնդին. նա չափէ, և գտանէ ըստ ամենայնի անկանոն»[4]։ Սեգմենտի ճիշտ գծագիրը բերված է մեկ ուրիշ չհրապարակված տետրակի «Շարժումն ամենայն մոլորակաց» տեքստի մեջ[5]։ Նոր նմուշատիպի միջոցով կառուցվել էր փոված քը և սոսնձվել «կավե գնդի» վրա։ Աշխատանքների վերջին փուլում տեղադրվել ե ներկվել էին աշխարհագրական օբյեկտները։ Տեսնելով պատրաստի գլոբուսը, Ֆ. Պարրոտը բացականչում է. «Ահա առաջին գունդն երկրի, գրեալ հայերէն տառիւք»[6]։ Գլոբուսի կառուցման աշխատանքները տևել են երեք և կես ամիս՝ 1831 թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1832 թ. հունվարի 20-ը։ № 2 նկարի վրա պատկերված է Արովյանի տետրակների տվյալների և նրա կազմած Արևմտյան կիսագնդի քարտեզի հիման վրա կառուցված գլոբուսի մոդելը։

Նկ. 2

Դորպատյան օրագրերը վկայում են, որ գլոբուսի կառուցման աշխատանքները դեռ չավարտած Աբովյանն իր նախաձեռնությամբ գծագրում է նաև Արևելյան Հայաստանի քարտեզը (նկ. 3) և ցույց է տալիս իր ուսուցչին։ Բայց Պարրոտը գտնում է այն անժամանակ. «1832 թ. 3 յունվարի։ Պարրոտ։ Յառաւօտոյն 8-րորդում ժամու տանիմ զժամանակագրութիւն առ բարերարն իմ և զկարտն Հայաստանի, զորս կամէի նկարել. վասն առաջնոյն շնորհակալի. վասն յերկրորդին արգելէ ինձ ձեռնարկել յայնպիսի իրս ազի դժուարին է, ասէ, այս ձեզ և դուք կորուսեալ զժամանակն, ոչինչ շահիք. յապագան կարէք նկարել զայնս»[7]։ Հիշյալ քարտեզը նույնպես պահպանվել է և գտնվում է վերը նշված տետրակներից մեկում, Արևմտյան կիսագնդի քարտեզի հետ միասին։ Քարտեզի չափսերն են՝ 72×99 մմ, գծագրված է սև թանաքով և լավ է պահպանված։

Ի՞նչն է դրդել Աբովյանին գծագրել այդ քարտեզը։ Ինչպիսի՞ քարտեզներից է նա օգտվել այն կազմելիս։ Հնարավոր է, իհարկե, որ նա հենվել է սոսկ իր հիշողությունների վրա։ Սակայն հայտնի է, որ Դորպատում սովորելու տարիներին նա ձգտել է գտնել իր հայրենիքի վերաբերյալ տվյալներ, օտարերկրացիների նկարագրություններ, հրապարակի վրա եղած տարբեր լեզուներով գրված գրքեր։ Բացի այդ, նա համապատասխան նյութեր է նախապատրաստում հայրենիք վերադառնալուց հետո ուսումնական նպատակներով օգտագործելու համար։ Գուցե Արևելյան Հայաստանի քարտեզը պետք է պատկերազարդեր նրա որևէ աշխատությունը։ Երևում է, որ այս քարտեզը գծագրվել է ինքնուրույն, առանց Պարրոտի ղեկավարության կամ օգնության։ Հետևաբար նա արդեն ուներ այնքան աշխարհագրական գիտելիքներ, որ համարձակվել էր ինքնուրույն դիմել այդ քայլին և բերել քարտեզը ուսուցչի տուն։

Այս քարտեզը ևս գծագրված է սխեմատիկ ձևով, բայց ունի աստիճանացանց և համապատասխան պայմանական նշաններ։ Նկատելի է հեղինակի ձգտումը աշխարհագրական երկայնության և լայնության աստիճանները ստորաբաժանել ավելի մանր մասերի։ Բավական ճիշտ և մանրամասն է ներկայացված հիդրոգրաֆիկ ցանցը՝ Արաքսը բոլոր իր գլխավոր ձախ վտակներով և Սևանը։ Նշված են Ախուրյան, Ապարան (Քասաղ), Զանգու, Ազատ և Արփաչայ գետերը (Ախուրյանը և Ազատը չեն մակագրված)։ Աբովյանը փորձում է ցույց տալ նաև օրոգրաֆիան. նա հատուկ պայմանական նշանով պատկերել է Արարատի ու Ալագյազի (Արագած) լեռնային զանգվածները և Գեղամա ու Վարդենիսի լեռնաշղթաները։ Բնակավայրերից նշված են Երևանը (աստղաձև նշանով), Բայազետը և Կաղզվանը։ Ընդունված պայմանական նշաններով գծված են պետական սահմանները։ Հավանաբար քարտեզի հիմնական նպատակն է եղել ցույց տալ վարչաքաղաքական նոր փոփոխությունները. Արևելյան Հայաստանը մտցված է «Ռուսական երկրի» մեջ, իսկ հա-

4 «Երկերի լիակատար ժողովածու», հատ. Ե, էջ 31։

5 ԳԱԹ, Խ. Աբովյանի արխիվ, № 134, թ. 4։

6 «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 6, էջ 135։

7 Նույն տեղում. էջ 144։



Նկ. 3

ռևան երկրներից նշված է միայն Պարսկաստանը։

Սխեմատիկ բնույթ ունի և երրորդ՝ Հյուսիսային բարեխառն գոտու քարտեզը (նկ. 4)։ Նրա երկարությունը 236 մմ է, իսկ լայնությունը՝ ընդամենը 32 մմ։ Ինչպես և նախորդ մոտավոր։ Այնուամենայնիվ հեշտությամբ կարելի է կռահել քարտեզի նպատակը. ցույց են տրվում Հայաստանի տեղն ու դիրքը երկրագնդի վրա, նույն աշխարհագրական լայնության վրա գտնվող Հարավային Եվրոպայի երկրները, միջին և կենտրոնական Ասիան, Ճա-



Նկ. 4

քարտեզները, սա էլ գծագրված է սև թանաքով, համեմատաբար հաստ և գորշագույն թղթի վրա, բայց պահպանվել է ոչ այնքան լավ։ Այն կցված է «Հայրենի բնություն» խորագիրը կրող նույնպես չհրապարակված տետրակներից մեկին8։ Քարտեզը ընդգրկում է մոտավորապես Հյուսիսային լայնության 20-ից մինչև 60 աստիճանը։ Ի տարբերություն երկու նախորդ քարտեզների, այն աստիճանացանց չունի։ Աշխարհամասերի ուրվագծերը գծագրված են շատ

ոնիան, Հյուսիսային Ամերիկայի կենտրոնական շրջանները։ Մակագրված են Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, Մոնղոլիան, Մեծ օվկիանոսը, Հյուսիսային Ամերիկան և Ատլանտյան օվկիանոսը։

Ուսումնառության տարիներին Աբովյանի պատրաստած այս բոլոր քարտեզները ապացուցում են, որ առանց համապատասխան քարտեզների նա չի պատկերացնում աշխարհագրության դասավանդումը։ Օրինակ՝ Երևանի գավառական ուսումնարանի գործերն ընդունելիս, 1843 թ. սեպտեմբերի 4-ին, նախկին դիրեկտոր

8 ԳԱԹ, Խ. Աբովյանի արխիվ, № 128։

Ֆ. Ա. Խաջիֆոտովի ներկայությամբ անցկացրած բննություններից հետո Արովյանի գրած գնկուցագրում կարդում ենք. «Առաջին բաժանմունքում անցել են մաթեմատիկական աշխարհագրություն, առանց մեկնարանումների, առանց գլոբուսի, նույնիսկ առանց քարտեզների։ Երկրորդ բաժանմունքում ի վիճակի չեն քարտեզի վրա ցանազանել հինգ աշխարհամասերը կամ օվկիանոսները կամ Եվրոպայի քաղաքական բաժանումը»[9]։ Եվ Արովյանը սկսում է ոչ միայն կանոնավոր օգտագործել ուսումնարանում եղած քարտեզները, այլև անընդհատ հարստացնում է գրադարանը նոր հրատարակված քարտեզներով ու ատլասներով։ Պահպանվել են մի քանի անդորրագրեր և նամակներ՝ Թիֆլիսից, Պետերբուրգից և այլ քաղաքներից քարտեզներ ու ատլասներ դուրս գրելու վերաբերյալ։ Երևանի գավառական ուսումնարանի գրադարանի 1849 թ. գրքերի ցուցակից[10] պարզվում է, որ Արովյանն իր դասերին օգտագործել է հինգ մեծադիր քարտեզներ և վեց տարբեր ատլասներ։

Արովյանի վերոհիշյալ գործերը վկայում են Դորպատում նրա ստացած աշխարհագրական, մասնավորապես քարտեզագրական գիտելիքների մասին։ Արևելյան Հայաստանի քարտեզը ցույց է տալիս նաև նրա հասուն հայրենագիտական գիտելիքները։

Արովյանի՝ առաջին անգամ հրապարակվող այս քարտեզները խոսում են այն մասին, որ մեր մեծ լուսավորիչը գիտեր աշխարհագրական սխեմատիկ քարտեզներ գծագրել և աշխարհագրական ուսումնական գլոբուսներ պատրաստել և ծառայեցնել դրանք մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ նպատակներին։

Ժ. Ի. ԳԱՆԻՆ

ԽԵՅԵՂԵՆԻ ԹՐԹՄԱՆ ՀՆՈՑ ԴՎԻՆԻՑ

Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դվինի միջնաբերդի ստորին հատվածը քաղաքի առավել բնակեցված տեղամասերից է եղել։ Այն ընդգրկել է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք 450 մետր երկարությամբ և 300 մետր լայնությամբ տարածություն[1]։ Դարավանդաձև կառուցված բնակարաններում, ըստ պատմական տվյալների, ապրել է քաղաքի վերնախավը։ Սակայն վերջին տարիների պեղումների հետևանքով բացված արհեստավորական թաղամասերը վկայում են, որ այստեղ ապրել են նաև արհեստավորներ, որոնք իրենց արտադրանքով բավարարել են տեղի բնակչության առօրյա կարիքները։

Պայմանականորեն նշանակված քառակուսիներում՝ տարածությամբ 7,25×8,50 մետր, 1976 թ. պեղումների ընթացքում բացվեցին բնակարաններ և նրանց կից տնտեսական նշանակություն ունեցող շինություն, որի պատերը շարված են ոչ շատ խոշոր, անկանոն գետաքարերով։ Միջնապատերը քանդված են։ Համեմատաբար լավ է պահպանված արևմտյան հում աղյուսե պատը, որը կցվել է հետագայում, տարածքը լայնացնելու նպատակով։ Այն ուղիղ գծով կապվում է կողքի շինության հետ, որի մուտքն արևմտյան կողմում է[2]։ Ամենայն հավանականությամբ նույն կողմում պետք է լինի ուսումնասիրվող համալիրի մուտքը, քանի որ այստեղով է անցել թաղամասի գլխավոր փողոցը։ Ստորին բերդի այս հատվածի վերին շերտը պեղվել է դեռևս 1952 թ.[3]։

1976 թ. վերսկսված աշխատանքների ընթացքում, նույն տարածքի հաջորդ շերտում, բացվեցին չորս տարբեր տրամագծերի բավակա-

---

9 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 70, թ. 7։

1 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 24։

10 Նույն տեղում, գ. 1733, թ. 16—20։

2 Ա. Ժամկոչյան, Դվինի ստորին բերդի պեղումները (թեզիսներ), Երևան, 1977, էջ 36։

3 1952 թ. դաշտային գրառումներից (դաշտային օրագրերը պահվում են ՀՊՊԹ ֆոնդում) պարզվում է, որ այստեղ բացվել է քառակուսի աղյուսե օջախ և հացատան այան խարիսխ։ Այժմ այդ վերին շերտից մնացել են միայն 2 քառ. մ մակերես ունեցող, մեկ մետր բարձրությամբ տնտեսական ինչ-որ նպատակի ծառայող սենյակի հետքեր։ Այս շերտի վրա դեռևս պահպանված հում աղյուսե պատերով օջախատիպ քառանկյունի կառույցը, նրա կողքին ձագարանման 36 սմ խորությամբ փոսիկը (որը քարերով շարված և երեսապատված է), ինչպես նաև թրծած աղյուսներով շարված հատակը վկայում են, որ հետագայում էլ տարածքը ծառայել է տնտեսական նպատակի։